Հ. Մ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ. Նոր Բայազետի գավառը 1914–1920 թթ., *Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2012, 433 էջ:*

Վերջին շրջանում հայ պատմագիտության կարևոր նվաճումներից է առանձին գավառների ու նահանգների պատմության ամբողջական ուսումնասիրությունը: Վերոնշյալի թվում է վերջերս լույս տեսած մի շատ արժեքավոր աշխատություն, որի հեղինակն է վաստակաշատ գիտնական ու մանկավարժ, պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր Համլետ Մալխասի Հարությունյանը: Նրա «Նոր Բայազետի գավառը 1914–1920 թթ.» խորագրով աշխատությունը տպագրվել է ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ, իսկ պատասխանատու խմբագիրն է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Աշոտ Աղասու Մելքոնյանը:

Աշխատությունը կազմված է հինգ գլուխներից, առ ներածական խոսքից ու վերջաբանից, արխիվային հավելվածներից, օգտագործված աղբյուրների ու գրականության ցանկից:

Նախ պետք է նշել, որ սույն ուսումնասիրությունը հեղինակի դեռևս 2008 թվականին լույս տեսած «Նոր Բայազետի գավառը 1828–1913 թթ.» գրքի օրգանական շարունակությունն է: Այս անգամ ուսումնասիրության առարկան Նոր Բայազետի գավառն է՝ առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակից մինչև Հայաստանի Առաջին Հանրապետության վերջին մայիսը: Աշխատությունն ընդգրկում է բարձրացված հարցերի լայն շրջանակ՝ վարչատարածքայինից, ժողովրդագրականից, սոցիալ-տնտեսականից, հասարակական-քաղաքականից մինչև հոգևոր-մշակութային ու կրթալուսավորչական կյանքը:

Հեղինակը գիտական շրջանառության մեջ է դրել արխիվային արժեքավոր բազմաթիվ նորահայտ փաստաթղթեր,որոնք անհամեմատ խորացնում են ուսումնասիրվող նյութի իմացության շրջանակները, որոշակիորեն հստակեցնում Նոր Բայազետի գավառի պատմության ուսումնասիրությունը:

Արծարծված հարցերը լուսաբանվել են պատմագիտական գրականության, արխիվային հարուստ սկզբնաղբյուրների և ժամանակաշրջանի մամուլի փաստառատ նյութերի հիման վրա՝ պատմաքննական ու համադրական վերլուծության մեթոդներով: Արխիվային փաստաթղթերը և վիճակագրական տվյալները հեղինակի կողմից հնարավորինս համեմատվել ու համադրվել են իրար, դրանցում առկա փաստական նյութերի ու թվական տվյալների անճշտությունները նվազեցնելու կամ իսպառ բացառելու համար:

Առաջին գլխում («Նոր Բայազետի գավառի վարչատարածքային սահմանները և բնակչությունը 1914–1920 թթ.: Գավառը ՀՀ վարչական բաժանումների հոլովույթում») տրված է Նոր Բայազետի գավառի կազմավորման ընթացքն ու կատարված փոփոխությունները, էթնադավանաբանական խմբերի հարաբերակցությունը, ներքին վերաձևումները: Նշվում է, որ Նոր Բայազետի գավառը Երևանի նահանգի ամենահայահոծ գավառներից մեկն էր և մինչև առաջին համաշխարհային պատերազմն այն ուներ 136 գյուղ, որից հայկական էր 53-ը, ռուսական՝ 7-ը, իսկ մնացած 76-ը՝ թուրքական, քրդական և խառը: Գավառի բնակչության ընդհանուր թվաքանակը նույն ժամանակ կազմել է 185 հազար մարդ, որից հայ ազգությանն էր պատկանում ավելի քան 115հազարը (66,4 %):Հետաքրքիր տեղեկություններ ու փաստեր են հաղորդվում ոչ միայն Նոր Բայազետի գավառի ու Երևանի նահանգի,այլև Անդրկովկասի սահմանափոխման և սահմանաբաժանման փորձերից ու քննարկումներից:Վերոնշյալ հարցն ու դրա շուրջ քննարկումներն ավելի հրատապ ու առարկայական դարձան հատկապես ցա-

ռիզմի տապալումից հետո, երբ Անդրկովկասում ծագեց գեմստվոյական հիմնարկություններ կազմավորելու անհրաժեշտությունը: 1917 թ. ամռանը Անդրկովկասի ազգային-տարածքային տարանջատման հարցը հույժ օրակարգային էր և դարձել էր քաղաքական ուժերի, տեղական ու կենտրոնական իշխանությունների լայն քննարկման թեմա: Տեղին է մեջբերված Դավիթ Անանունի բնորոշումը. «ազգային տերիտորիալ որոնումը 1917 թ. կազմում էր Անդրկովկասի ժողովուրդների կենտրոնական մտահոգությունը» (էջ 15): Սույն հիմնահարցի շուրջ կայացած խորհրդակցություններում հայկական պատվիրակների դեմ միասնական ճակատով հանդես էին գալիս թաթար-ադրբեջանական և վրաց ազգայնականները: Հեղինակը փաստարկում է վերոնշյալ խորհրդաժողովներում քննարկումների ընթացքն ու հետևանքները:

Ապա ներկայացվում է անկախ պետականության կազմավորումից հետո հանրապետության ներքին իրավիճակի կայունացմանը զուգընթաց վարչատարածքային նոր փոփոխությունների գործընթացի հիմնական միտումներն ու կատարված ժողովրդագրական տեղաշարժերը: Վերոնշյալը հիմնարար ու սպառիչ կերպով ցույց է տրված նաև աղյուսակներով (էջ 32–35): Թվական տվյալների համադրումից պարզվում է, որ 1914 թ. համեմատությամբ, 1919 թվականին Նոր Բայազետի գավառի ընդհանուր բնակչության թիվը կրճատվել է ավելի քան 29,5 հազարով (կամ՝ 27 %-ով), իսկ հայերի թվաքանակը պակասել է մոտ 9 հազար մարդով կամ կրճատվել է 1,1 անգամ:

Հետազոտողը հայերի թվաքանակի պակասելը հիմնավորում է առաջին համաշխարհային պատերազմով և 1918 թվականին տեղի ունեցած թուրքական արշավանքով, որոնք բազմահազար կյանքեր խլեցին: Մյուս կողմից էլ բնակչության բավարար աճի համար չկային նպաստավոր պայմաններ՝ սոցիալ-տնտեսական ծանր կացությունը, սովը, համաճարակները, արտագաղթը և այլն:

Երկրորդ գլխում («Նոր Բայազետի սոցիալ - տնտեսական դրությունը 1914–1920 թթ.») հիմնարար մակարդակով քննվում է գավառի հողատիրության ու հողագործության, մեղվաբուծության, ձկնորսության, արդյունաբերության և առևտրի վիճակը, ընդ որում այն մշտապես համեմատության մեջ է դրվում Երևանի նահանգի ընդհանուր ցուցանիշների հետ: Ըստ այդմ, Նոր Բայազետի գավառում պետական հողատիրությունը մոտ 23 %-ով գերազանցում էր նահանգի միջին ցուցանիշին, իսկ կալվածատիրական-վանքապատկան հողատիրությունը միասին զիջում էր 13,1 %-ով: Ներկայացված 7-րդ աղյուսակի տվյալները վկայում են, որ գավառի ընդհանուր հողատարածքի 62 %-ը (286446 հա) բնակված տարածություններն էին, իսկ անբնակ տարածությունները կազմում էին 175254 հա կամ 38 %-ը: Ըստ հետազոտողի՝ կալվածատիրական հողատիրությունը գավառում և Երևանի ամբողջ նահանգում առանձնապես տարածված չէր: Այսպես, Նոր Բայազետի գավառում 1916 թ. կալվածատերերի թիվը հասնում էր 195 մարդու (143 տղամարդ և 52 կին), որը ընտանիքի անձնակազմի հետ միասին կազմում էր գյուղական ընդհանուր բնակչության թվաքանակի 0,11 %-ը:

Անշուշտ, ճշմարիտ է այն պնդումը, որ Հայաստանում հողօգտագործման հիմնական ձևը եղել է համայնականը, և այդ առումով ևս Նոր Բայազետի գավառը բացառություն չէր:

Առաջին համաշխարհային պատերազմի առաջ բերած ծանր կացության պատճառով քայքայվեց ու կործանման եզրին հայտնվեց նաև Նոր Բայազետի տնտեսությունն ընդհանրապես և գյուղատնտեսությունը մասնավորապես: Ստեղծվեց մի վիճակ, երբ գյուղում նկատելի դարձավ աշխատող ձեռքի պակասը, կտրուկ կրճատվեց բանող անասունների գլխաքանակը (հարկադիր մորթի պատճառով) և պակասեց գյուղատնտեսական գործիքների միավոր-քանակը: Նման իրավիճակում հայ գյուղացիությունը տառապում էր ոչ այնքան հողի պակասությունից, որքան իր հողաբաժինը մշակելու և օգտագործելու անկարողությունից:

Պետք է նշել, որ սույն գլխում հեղինակը հետաքրքիր և արժեքավոր տեղեկություններ է հաղորդում գավառի տարածքում

մեղվաբուծության և ձկնորսության, արդյունաբերության և առևտրի զարգացման մասին:

Երրորդ գլխում («Փախստականները Նոր Բայազետի գավառում») նշվում է այն գործոնների մասին, որոնք փախստականների զանգվածային հոսք ստեղծեցին: Արևմտահայերի ստվար զանգվածներով փախուստը դեպի Արևելահայաստան սկսվեց 1914 թ. դեկտեմբերից, երբ դեպի Բագրևանդի և Բասենի գավառներ ռուսական զորքերի առաջխաղացումը ժամանակավորապես կասեցվեց: Փախստականների կարիքները հոգալու ողջ ծանրությունը ընկած էր հայ հասարակության վրա և նրանց օգնելու գործում, բնականաբար, առաջին հերթին հանդես եկավ հայ Առաքելական եկեղեցին: Փաստառատ տվյալների հիման վրա բացահայտվում է կատարված աշխատանքի ողջ ծավալը, որն անհրաժեշտ էր արևմտահայ գաղթականների կյանքը փրկելու համար: Սույն գործընթացներում մեծապես կարևորվում է Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ 5-ի ունեցած դերը, որը 1914 թ. դեկտեմբերի 28-ին հայրապետական կոնդակով ստեղծում է Էջմիածնի Եղբայրական օգնության գլխավոր գործադիր հանձնաժողովը՝ որպես փախստականներին օգնություն ցուցաբերող գլխավոր մարմին: Այն ուներ երեք ճյուղավորում՝ Էջմիածնի, Երևանի և Ալեքսանդրապոլի: Երևանի ճյուղի մեջ մտնում էին Նոր Բայազետի, Ներքին Ախտայի և Ելենովկայի եղբայրական օգնության կոմիտեները:

1914 թ. դեկտեմբերի վերջերից Ալաշկերտի գաղթականներից շուրջ 500 ընտանիք ուղարկվում է Նոր Բայազետի շրջանը: Գավառի իշխանություններն ու բնակիչները հարկ եղած պատրաստակամությամբ ու բարյացակամությամբ ընդունեցին փախստականներին: Ներկայացված աղյուսակը (էջ 162) հստակորեն գծագրում է Արևմտյան Հայաստանից և Պարսկաստանից եկած փախստականների տեղավորման գործընթացի պատկերը:

Իրավացի է Հ. Հարությունյանը, երբ դիտարկում է, որ 1915 թ. սկզբներից Երևանի նահանգի (այդ թվում՝ Նոր Բայազետի գավառի) հայությունը ուժից վեր ջանքեր էր գործադրում ընդունելու և տեղավորելու թուրքական յաթաղանից մազապուրծ հայ փախստականներին: Վերոնշյալի մասին սպառիչ նկարագրություն է թողել ականատեսը «Հորիզոն» պարբերականում. «Վերջին օրերս գաղթականները գալիս են ու գալիս: Բոլորը մերկ, գունատ, նվազ, ոսկրացած: Կատարյալ ուրվականներ: Տնքոցից միայն իմացվում է, որ նրանք շնչավոր են: Մեծ մասը կանայք ու երեխաներ» (էջ 165):

Արժեքավոր և ուսանելի է հեղինակի նաև այն գնահատականը, որ այդ մղձավանջային օրերին փախստականներին օգնելու, նրանց հիմնախնդիրները լուծելու հարցում նկատելի էր ցարական իշխանությունների շահագրգիռ վերաբերմունքի իսպառ բացակայությունը:

Աշխատության չորրորդ և հինգերորդ գլուխները նվիրված են Նոր Բայազետի գավառի հասարակական-քաղաքական հարաբերությունների և կրթական կյանքի լուսաբանմանը՝ դիտարկված առավել լայն համապատկերի վրա: Հիմնական շեշտադրումներն ուղղված են գավառի հասարակական-քաղաքական հարաբերությունների ընթացքի վրա առաջին աշխարհամարտի թողած ազդեցությունների, 1918–1920 թթ. Երևանի նահանգում և Նոր Բայազետի գավառում իշխանության տեղական մարմինների կազմավորման բարդ գործընթացների խորքային բացահայտմանն ու լուսաբանմանը: Առաջին համաշխարհային պատերազմը Արևմտյան Հայաստանի ազատագրության հույս էր ծնել ամենուր, այդ թվում՝ սույն գավառի հայության շրջանում: Ահա այդ պատճառով հայության բոլոր շերտերը Անտանտի տերությունների հաղթանակին տրամադրեցին առավելագույն կենսունակ ուժեր: Պատերազմին Նոր Բայազետի հայությունն արձագանքեց նաև կամավորական շարժմանը մասնակցելով: Արժանապատվության զգացումով են լցված ռազմաճակատներից երիտասարդների գրած նամակները՝ ուղղված մտերիմներին ու հարազատներին: Թիկունքում մնացածները պահեստի զինվորներին և նրանց ընտանիքներին օգնում էին հանգանակություններով ու նվիրատվություններով: Աշխատության մեջ ներկայացված են հու-

զիչ,սրտաճմլիկ օրինակներ, որոնք վկայում են վերոնշյալ գործընթացներին նորբայազետցիների մասնակցության ազնիվ ու վեհ դրդապատճառների խոր առկայության մասին:

Հետաքրքիր տեղեկություններ են հաղորդվում Նոր Բայազետի քաղաքային դումայի ընտրությունների, քաղաքային կոմիտեի ձևավորման, ընտրությունների, քաղաքական կուսակցությունների մասնակցության ձևերի ու մեթոդների, Երևանի նահանգում զեմստվոյական ինքնավարություններ հիմնելու նախագծերի վերաբերյալ:

Հ. Հարությունյանը բացում է փակագծերը այն դավադրության, որը պարունակում էր վրացի ազգայնական Ա. Չխենկելիի պատրաստած Անդրկովկասի կոմիսարիատի զեմստվոյի վերաբերյալ դեկրետը: Ըստ վերոնշյալի՝ անվիճելի են ճանաչվել վրացապատկան և կովկասյան թաթարներով լեցուն տարածքները, իսկ վիճելի՝ հիմնականում հայկական տարածքները: Անչափ տեղին ու ճշմարիտ է այն դիտարկումը, որ այս «հոչակագրի նպատակը, կոմիսարիատի տեսակետից, վրացիների ու Կովկասի թաթարների դիրքերի ուժեղացումն էր տարածաշրջանում, մյուս կողմից էլ հայ ժողովրդի դե յուրե կամ դե ֆակտո չեզոքացումը՝ որպես այդ տարածքների օրինական սեփականատիրոջ» (էջ 265):

Քննարկվող կարևորագույն հիմնահարցերի շարքում են թուրք-թաթարական խռովությունները, 1920 թ. մայիսյան ապստամբության ընթացքը Նոր Բայազետի գավառում, որոնց լուսաբանմանը հատկացված են առանձին ենթաբաժիններ:

Կրթության զարգացման, կրթական շինարարության հիմնախնդիրներին է նվիրված վերջին գլուխը, որն ամենածավալուններից է՝ 91 էջ: Ընդարձակ տեղեկագրերը հավաստի տեղեկություններ են հաղորդում գավառի դպրոցների, սովորողների տարիքի ու թվաքանակի, դասավանդող ուսուցիչների կրթական ցենզի, ստացած աշխատավարձի և այլ բաղադրիչների մասին:

Ամփոփենք. անվարան կարելի է ասել, որ մեծավաստակ պրոֆեսոր Համլետ Հարությունյանին հաջողվել է ստեղծել մի արժեքավոր աշխատանք, որը, պատկերավոր ասած, Նոր Բայազետի՝ 1914–1920 թվականներն ընդգրկող պատմության տարեգրությունն է:

Նկատվող տեխնիկական բնույթի չնչին թերությունները ոչնչով չեն կարող նսեմացնել սույն աշխատության հույժ կարևորությունը, հրատապությունն ու արդիականությունը:

ԱՐՄԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ